«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

24.01.2019թ.

Գեղարքունիքի մարզպետ
Պարոն Գնել Սանոսյան

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Սանոսյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2018թ. և 2019թ. հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ Գեղարքունիքի մարզպետարանի բոլոր աշխատակիցների (այդ թվում՝ մարզպետ, տեղակալներ, օգնականներ, խորհրդականներ, գործավարներ և այլն) պարգևավճարների համար հիմք հանդիսացող իրավական ակտերի պատճենները՝ կից հավելվածներով:
2. 2018թ. և 2019թ. հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ Գեղարաքունիքի մարզպետարանի բոլոր աշխատակիցների (այդ թվում՝ մարզպետ, տեղակալներ, օգնականներ, խորհրդականներ, գործավարներ և այլն) գործուղման ծախսերն առանձին-առանձին՝ ըստ գործուղվողի տվյալների, գումարի չափի, գործուղման վայրի և ամիս ամսաթվի:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան